

## Կապարային միջավայրն ենթարկվող շրջակա միջավայրի աղտոտման աղբյուրները

Շրջակա միջավայրի աղտոտման կարևոր աղբյուրներն են կապարի արդյունահանումը, ձուլումը, դրա օգտագործումն արդյունաբերական արտադրությունում, վերամշակումը, ինչպես նաև կապարի օգտագործումը ապրանքների լայն տեսականիում:



Կապարն օգտագործվում է բազմաթիվ արտադրություններում, այդ թվում՝ մեքենաների և էներգիայի պահպանման այլ սարքերի համար կապարաթթվային մարտկոցների, գունանյութերի և ներկերի, զոդման, զինամթերքի, կերամիկական ջնարակների, զարդերի, վիտրաժի, կապարե բյուրեղյա սպասքի, խաղալիքների և որոշ կոսմետիկայի մեջ, ինչպես նաև Ջնդկաստանում, Մեքսիկայում, Վիետնամում և այլ երկրներում արտադրվող ավանդական դեղամիջոցների արտադրությունում: Կապարի համաշխարհային սպառման ավելի քան  $\frac{3}{4}$  մասը (երեք քառորդը) բաժին է ընկնում ավտոմոբիլների համար կապարաթթվային մարտկոցների արտադրությանը: Այնուամենայնիվ, կապարն օգտագործվում է նաև շատ այլ ապրանքներում, ինչպիսիք են գունանյութերը, ներկերը: Նախկինում խմելու ջուրը մատակարարվում էր կապարե խողովակներով կամ կապարով զոդված խողովակներով: Ներկայումս համաշխարհային տնտեսության կարիքների համար կապարի զգալի մասը ստացվում է վերամշակման արդյունքում:

Քանի որ կապարը չի քայքայվում շրջակա միջավայր արտանետվելուց հետո, այն համարվում է մարդու օրգանիզմի վրա վնասակար ազդեցության հավանական և մշտական աղբյուր:



Սույն տեղեկատվական նյութը ստեղծվել է «Հայ կանայք հանուն առողջության և առողջ շրջակա միջավայրի» ՀԿ-ի կողմից՝ «Աղտոտիչների վերացման հարցերով միջազգային ցանց»-ի (IPEN) ֆինանսավորմամբ իրականացվող «Կապարը ներկերում» ծրագրի շրջանակում:

